ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 55-Ա

<< 23 >> դեկտեմբերի 2016 թվական գյուղ Նահապետավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 48-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավանի համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 8:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավանի համայնքի ավագանու 05 դեկտեմբերի 2016 թվականի 2016 թվականի թիվ 48-Ա որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ-3 **Դեմ-0** **Ձեռնպահ-0**

Եզեկյան Սարիբեկ
Թադևոսյան Կարեն
Պետրոսյան Մխիթար

Նահապետավան համայնքի ղեկավար՝ Գ.Պետրոսյան

23 դեկտեմբերի 2016 թ.
գ.Նահապետավան